ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 14.01.2019թ.ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-2» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան փետրվարի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 14.01.2019թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցմամբ և ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված՝

1.1 Պայմանագրի 4.2 ենթակետում «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը» բառերով:

1.2 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ից հանել «ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը» բառերը:

1.3 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Աբովյան, Խաղաղության 1
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1930011980040100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00096001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Հ. Ֆարամազյան
----------------------------------- (ստորագրություն) Կ.Տ.	----------------------------------- (ստորագրություն) Կ.Տ.

POLADYAN KAREN 1911770055 Digitally signed by POLADYAN KAREN 1911770055 Date: 2019.02.15 15:05:45 +04'00'

Digitally signed by FARAMAZYAN HAYK 3303790167 Date: 2019.02.13 15:00:26 AMT

Հավելված N 1
«   » փետրվարի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 14 » հունվարի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-2» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	***գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)***	***անվանումը***	***դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում***												
			հունվար	***փետրվար***	***մարտ***	***ապրիլ***	***մայիս***	***հունիս***	***հուլիս***	***օգոստոս***	***սեպտեմբեր***	***հոկտեմբեր***	***նոյեմբեր***	***դեկտեմբեր***	***Ընդամենը***
2	***32411130/522***	***2. Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն***	-	2 016 000	2 016 000	4 536 000	4 536 000	4 536 000	7 056 000	7 056 000	7 056 000	10 080 000	10 080 000	10 080 000	***10 080 000***

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

\---
(ստորագրություն)
Կ.Տ.

POLADYAN KAREN 1911770055
Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2019.02.15 15:05:22 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Աբովյան, Խաղաղության 1
Հ/Հ՝ 1930011980040100
ՀՎՀՀ՝ 00096001
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Ֆարամազյան

\---
(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by FARAMAZYAN HAYK 3303790167
Date: 2019.02.13 15:00:58 AMT